

W3W

L P E Q P P

ФЕДЕРАЦИЯ, СОФІЯ, ФЕДЕРАЦІЯ ВІД СОФІЯ

Տարեկան գին կանիքիկ Ղուղուշ 100 : Վեցամսեայ գին Ղուղուշ 52 ½ : Եռամսեայ գին 26 ¾ : Հինգ նոտրագրուց գունդին մեկ օրինակ իրեն ձրի ոյտի տրուի :
Այս Լրագիրը ամեն շաբաթ օրերը կը հրատարակուի :

Պաշտոն դուրս գացնել Հրապարակուն Փօսթային ծախքը տանողին վրայ է :
Իր շահին համար չուր մը հրատարակեց ուցոց դիմու ջնարէ տողին 40 փարայ :
Նորատիդ գրոց տանուցումը ձրի է : Դուրս կան եկած նամակներուն Փօսթային ծախքը նորկոց դիմու ջնարէ :

РЕДАКЦИЯ

‘**U****b** **P****R****F****T****U** **L****U****F****P****b** **P**

ՊՈԼԻՍ 13 ՄԱՐՏ

Ամեն տարի աս առեն արքունի նաւատօրմից զը նաւարանէն կը պատրաստուի գուրս կ'ելայ . ուստի այս շաբթօն հրաման եղաւ վսեմափայլ ծովագետին , որ խիսյն նաւերը պատրաստէ գուրս հանէ : Հիմայ արքունի նաւարանը մեծ գրադմունքի մէջ է . և արդէն նաւերուն կէսը կատարեալ պատրաստուած գուրս ելաւ չօրս հինգ օրվան մէջ :

— Երդիւրիւմի նախոկին կառավարիչ Խղեթ ժամանակակից անուանեցաւ :

- Եսանեայի Հաֆրդ փոշան ալ Իւսքիւրի կառավարիչ անուանեցաւ :
- Արապիստանի բանակին զօրապետներէն Պիճան փաշան ջէլլէտի կառավարիչ կոչուեցաւ Թէթմբանութան առարիժանուլ :
- Աքըունական գանձառաննը խորհրդին նախկին նախադասէ Արիժէ է թէնոտին արքունի հանդէսնե-

— Օ էջմին պուռանի անցեալ շաբթու մարդ մը
գտեր են սպաննուած, բայց գլուխը վրան ըլլալուն
ալ ըլլալը կամ ինչ տղթէ ըլլալը չձանջու ելուն, հիմա

միայն վլոյի հանդերձներէն ծար մը գտնալու համար բօշու շտո զգուշաւոր քննութիներ կ'ընե կօր :
— Հաւնվար 18 ին դիշերը կը յիշեմք որ մէկ մէծ գողութիւն մը եզաւ Պէջօղու Պ. Շիօվաննիին մաղաղացէն, և գողցուած բաներուն արժէ .քը կը հասնէր մինչեւ 115 հաղար զաւրուշի : Հետա Պ. Շիօվաննին իւր ձեռքովով իւր գողը գտեր է ելքութի մը նաւի մէջ : Գողցուած բաներէն քիչ մը բան միայն պակսեր է, մնացեալները հապոատելով բօշու տաշեւը իւր ըլլալը, առեր է :

— Օսմանեան տէրութեան Փարիզ Նստալ դեռ
պանը որ է վսեմափայլ Ախլէյման փաշան . Փարիզի
խռովութեան օրերը իւր նստած պալատին մօտե-
րը վիրաւորուող ինկող մարդոցը վրայ գթալով ներս
առնելուն և բժշկականութեան հետեւող հայագիտի
երիտասարդները անսնց՝ իրենց կարեացը չափ սիրով
դարձան տաճելիուն գաղփացիք չնորհակալութեան
նշան մը ցրցունելու համար , Ախլէյման փաշային
նստած պալատին բոլորակիքը յատկապէս ազգային
զօրք կայնեցուցեր են պահպանութեան համար :
Վյո խռովութիւնը ելլադուն պէս բոլոր օսմանցին
հագուակ երիտասարդները իրենց դեպանին դեռ
պահպանունը գացեր են նստելու մինչեւ խռովու-
թիւնը դադրեր է . ուստի անսնց մէկին վետա մը
չէ եզեր : Վյանկ կը գրէ Բ . գրանը յիշեալ Ախ-
լէյման փաշան . ով ոք որ Փարիզ գաւակ ունի նէ ,
թող հանգիստ ըլլայ սիրուը իւր զաւկին վրայ :

— | էմանվին անուն չոգենաւը որ փետրվար ամ
սուն 12 ին մեկնեցաւ | իվրբբլէն Ո՞յցրաքաղաքս
դալու համար՝ թօսքու կոչուած նաւահանգստին
առջեւը ցամաքը նաստելով մէկ կոզմին կործանեցաւ
այն նաւահանգստին սաստիկ մակընթացութեան
ժամանակը, և եաքը ջուրերը դարձեալ տեղերնին
դառնալով բոլորովին ծածկեցին նաւը : Եյս նաւա-
հանգստին առջեւը յաճախ կը պատահի ասոր պէս
ժամանակը մանկոնթացութենէն :

Այս շոգենաւը որուն անիւը ներքեւէն է, խիստ
շատ ապրանք ունէր բեռցած, բայց առանց սիրո-
բայի խիստ քիչ բան կար մէջը :

— Պէյօղութի գաղղիայի բնակիչները անցեալ կի-
րակի Դաղղիայի դեսպանատունը կ'երթման բազ-
մութեամբ որ հարցունեն գեսպանին թէ լնդու-
նած է մի Դաղղիայի նոր հասարակապետութիւնը :
Այսոր կ'իմանան ընդունած ըլլալը ուրախութեամբ
գեսպանատունէն գուրս կ'ելլան, բայց դուրսը կ'ի-
մանան որ դեսպանը բազմութեան երկիրդէն իւր

ասպահովթեանը համար պահապան զօրք ուղեր է ,
իսկոյն կրկին գեսապահատունը կ'երթան և կ'ըսկըսին
քեզ մոզի գեսպան չբանչան այսուհետեւ ըսե-
լով աղաղակ վերցունել . եւ հիւպատոսարանի ճակ-
տին հին քարաշէն առան կոտրտել : Հիմա կ'ըսեն
ու Գայունու ու մին են ու յան ու իւն ու իւն ու

որ Վաղվես գրեթ են որ այս գե սպանը փոխեն :
— Իսկէնտէրուն քաղաքէն կը գրեն յունվար 26
(14) ին : Առօր աշխարհք գիտէ որ այս քաղաքիս
անունը գէ շելած էր, որպէս թէ օդը շատ գէ շէ .
և ասոր պատճառն այն էր՝ որ շըլակաց բլուրներէն
քամուելով ինչած ջուրերը ծովը երթալու ճամբայ
չունենալով կը կային, լիձի պէս կ'ըլլան . կը հոտին
և օդը կ'աւրեն : Ասոր համար ճանապարհորդները
իրաւունք ունեցան այս երկիրս Վարդիկէի Այնէկալ
գտաւուին նմանցընելու : Սակայն 1833 ին՝ երբ որ
այս քաղաքս Եղիսաբետի կուսակալին ձեռքն էր, Պ.
Վարդինէլի հրաման առաւ . կուսակալէն որ այն
ջուրերը ծովը ինչեցընելու ճամբայ մը բանաց . որով
երկու աղէկութիւն կ'ըլլար . մէկ մը որ՝ քաղաքին
օդը կը մաքրուեր . և երկպարփ, նաւերն ալ իրենց
պաշտպին համար պատուական ջուր կը գլունային .
քանզի այս ջուրը որ կենալով կը գէշնայ և քաղա-
քին օդը կ'աւրէ, սիկզբէն շատ պատուական ջուր
մըն է : Այս ջուրի ճամբան շնուրած ատենէն ՚ի
վեր քաղաքիս օդը աղէկցած էր . և ատրաւէ տարի
սովորական եղած հիւանդութիւնները պակսելու
վրայ էին :

Պահի մը տարի կայ որ այս ջրանցքը տեղ տեղ
աւրուած ըլլալսվ նորոգութեան կարօտ եղած էր .
Քիչ մը խորունկցընելու , և եղերքն ալ քիչ մը վեր
բարձրացընելու էր , որ ջուրերը դուրս չելլին , և շր
ջակայ գետինները չկոխեն : Այս նորոգութիւննե-
րըս հարկաւոր եղած ըլլալը իմացուելով՝ առատա-
գութ Խերնակալին հաճութեամբը կառավարու-
թիւնը 13 կամ 14000 զուռուշ շնորհեց այս բանիս
համար , և գործայն վերակացութիւնը և կատարու-
մը Վանայի փաչացին յանձնեց : Այս ստակը եվե-
լք բաւական էր այս նորոգութիւններս ՚ի գործ
գրուելու համար . բայց գէշն այն եղաւ որ՝ բատա-
կը Վելլանի միւսէլիմին և ուրիշ քանի մը պէյե-
րու ձեռք անցաւ . որ ուզուած նորոգութիւնը շե-
նելուն տեղը աւելի յարմար սեպեցին նոր ջրանցք
մը բանալ քանի մը մասնաշափ խորութեամբ , և
մէկ երկու հարիւր կանգուն երկայնութեամբ :
Ետքը՝ չուրը մինչեւ ծով տանելուն տեղը կը բե-
րէին գաշտին մէջ կը ծաւալէին . որ ետքը կուգար
քալլաքին արեւելեան կողմը գտնուած ճահիճը կը
լեցուէր : Այսնկով՝ կառավարութեան կողմէն շը-
նորհուած 13 կամ 14,000 զուռուշ զով անանկ բան
մը շինուեցաւ , որ անձրեւ մը եկածին պէս բոլոր
խքէնտերունի գաշտը մէկ մեծ լիճ մը պիտի գտու-
նայ . նաւերը խրմելու համար առնելու ջուր պիտի
չկըրնան գըտնել . և մահաբեր հիւանդութիւննե-
րը նորէն պիտի սկըսին բնակիչներուն և ճանապար-
հորդներուն վրայ ծանրանալ : Խքէնտերուն՝ Հա-
լէպի նաւահանգիստ ըլլալսվ , և Հալէպ ալ ծաղ-
կեալ վաճառականութեան երկիր մը ըլլալով՝ եւրո-
պացի նաւեր և ճանապարհորդներ այս աեղաց բը-
նաւ պակաս չեն :

Պէլանու միւսէլիմը և ուրիշ շրջակայ տեղեց
րուն պէշերը այս բանը ընելու համար հաղիւ թէ
2500 կամ 3000 զուռուշ խարճած կ'ըլլան , (թէ որ
ամէն բանուորներուն վարձքը շիտկէ շիտակ տուին
նէ) . և ասով անանկ անպիտան մէկ խրամ (խան-
տէկ) մը փորելով՝ կառավարութեան կամացը բոլո-
րովին հակառակը ըրած կ'ըլլան . և իրենց շահուն
համար՝ ասանկ մէկ պատուական նաւահանգիստ մը
խափանելուն , և այն կողմերու բնակչաց ընելու
շահուն կը տուելուն պատճառ պիտի ըլլան : Այս
տեղեկութիւններս ժողովական պատճառ պիտի ըլլան :

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՐԵՆ

ԳԱՂԱՎԱ : Ենցած շաբթօռան թերթին մէջ հրատարակեցինք փետրվար 23 հրատարակուած լրւրերը : Այս անգամ անոր շարունակութիւնը պիտի ընեմք : Փետրվար 23 ցերեկը Փարիզ քաղաքին մէջ կատարեալ հանդարտութիւն եր : 23 ին իրիկունը Պ . Աիզօ իր պաշտօնէն հրաժարեցաւ : Պ . Աօլէին յանձնուեցաւ որ նորէն տէրութեան պաշտօնաւոր նախարարներ ընտրէ . անիկոյ այս գործո յանձնառու չեղաւ : Աւստի Պ . Օտիլիէօն Պառօին յանձնուեցաւ : 24 ին Լուի Ֆիլիպը թագաւորը թագաւորութեանէ հրաժարեցաւ , և թոռը՝ Քօնդ ար Փառի ըստած , թագաւոր անուանեցաւ Լուի Ֆիլիպը Բ . անունով . և ասոր մանկական հասակին համար՝ թագաւորութեան խնամանկալ ըստուեցաւ ասոր մայրը Օռլէանի դքսուհին : Լամոնիսիկը ճէնէւառն ալ՝ Փարիզու աղջային պահապան զօրաց սպարապետ զրաւեցաւ : 25 ին Օռլէանի դքսուհին՝ իր երկու աղջային , և հրաժարեալ թագաւորին երկու աղջային Տիւք ար Նըմուռը և Տիւք ար Մօնքանիսիէն հետը առաւ , քալէլով Դաւլըսի պալատէն ելաւ պատգամաւորներուն խորհրդարաննը գնաց . Ճամբան պատահաղինը հանդարտ և պարկեց կերպով յարգութիւննին կը ցըցընէին : Առնիք խորհրդարանը մըտնելնուն պէս՝ խօսք ըլլալ սկըսաւ հոն , որ Քօնդ ար Փառին թագաւոր , և Օռլէանի դքսուհին թագաւորութեան խնամանկալ ընդունին : Խորհրդարանին մէջ շատ շփաթ կար , և գրափ դին չորս կողմին անթիւ անհամար բազմութիւն գիշուած էր : Պ . Օտիլիէօն Պառօ բեմը ելաւ . խոռնիխուռան ձայներուն և անհնարին շփոթութեանց մէջ առաջարկեց որ նոր ընարսւած թագաւորը և անոր խնամանկալը ընդունուին : Այն ինչու , տեղը ելաւ Պ . Լամառդին . և անոր լասածին հակառակը խօսելէն եաբը եղանակացութիւն ըրաւ որ խնդիրը բոլորովին չխափանի , մտածելու և խորհրդակցելու ժամանակ ունեցուի . և մինչեւ այն ատենը մէկ առժամանակեայ կառավարութիւն մը հաստատուի : Պ . Քաէմիեօ և ուրիշ առենաբաններ ալ այս կարծեացս կուսակից գտնուեցան . և առաջարկութիւնը այս կերպով ընդունուեցաւ : Օռլէանի դքսուհին դուրս ելաւ . մէկ կառք մը դրանն առաջը պատրաստուած ըլլալով՝ երկու աղջային այս կարծին մէջ դրին տարին : Աը կարծուի որ բոլոր թագաւորական տունը Շատօ տ'էօ ըստած բերդը գացած ըլլայ :

Այս ատենը առժամանակեայ կառավարութիւն
մը գրաւեցաւ . որուն նախագահ անուանեցաւ Պ. Տիւբօն որ Հյու. արտաքին գործոց տեսուչ՝ եւ^շ
զաւ Պ. լամագին. պատերազմական գործոց տե-
սուչ Պ. Քարնօ . արդարութեան գործոց տեսուչ՝
Պ. Քուէմիեօ . տերութեան ներքին գործոց տե-
սուչ Պ. լասափւ - Ուոլքն . հասարակաց կրթու-
թեան վերակացու՝ Պ. Առակօ . և առժամանակեայ
կառավարութեան դիւանադպիլ՝ Պ. լուի Պլան :
Փարիզ քաղաքին քաղաքապետ անուանեցաւ Պ. կառնիէ Ռամէս, քաղաքին ազգային պահապան զօ-
րաց սպարապետ՝ Պլսո Ճէնէռալը . և Շէզզյերի
կուսակալ՝ Քալվանեալ Ճէնէռալը : Կ'ըսուի որ՝
լամօնիսիէր Ճէնէռալն ալ ազգային զօրաց քանն և
չորս շարժական խումբով խրկուեցաւ սահմանագր-
լուխները պահպանելու : Հանգարտութիւնը կա-
տարելագէս տիրած էր : Կարգաւորեալ զօրաց 45
երրորդ խումբը առանց Երկար ժամանակ գէմ կե-
նալու հասարակութեան կողմը անցէր էր . բայց ա-
սոր հակառակ՝ խոռոք մենէսիբալ լսուած զօրքը շատ
կարիճութեամբ պատերազմեցաւ , և շատ մարդ
կարսլցուց իրմէ : Ժողովրդեան ու զօրաց մէջ եղած
կուրիսին ատենը մեւնազներուն համբանքը 3000 հո-
գիէ կը համնի կ'ըսն : Խրուցն վերջը այն եղաւ՝ որ
խոռոք գենէսիբալ անունով ճանչցուած զինուորական

կարգը վերցուեցաւ :

Առժամանակեայ կառավարութիւնը հաստատու
ուելլուն պէս իրեն բընակարան ըրաւ հօդէլ ուշ վել
ըստուած չէնքը . և 26 ին հրատարակուեցաւ որ հա-
սարակապետութիւն պիտի ըլլայ , թէ որ ազգային
նախնական ժողովքները հաճութիւն տան նէ : Հատ
որոշումներ և վճիռներ հրատարակուեցան այս մի-
ջոցին հասարակապետութեան անունով . շատ գու-
շառներ և երեւելի քաղաքներ կառավարութեանը
այս կերպիս գտանալուն հաճութիւն տուին : Հա-
սարակապետութեան կողմէն հրատարակուած մէկ
վճիռ մը կ'ըսէ որ ամէն քաղաքացիք (ըսէլ է ամէն
ֆռանսըզ) ընտրող կրնան ըլլալ . և ազգային պա-
հապան զօրաց ամէնքն ալ ընտրելի կ'ըլլան : Կախ-
նական ժողովքները պիտի գումարուին ֆռանսըզ
ազգին ընդհանրութեանը կարծիքը հասկընալու-
համար :

Աշքեք գուռնով դրօշակը մնաց : Ո աճառականաց
ժողովարանը (պուռար) բացուեցաւ , և նորէն ի-
րենց գործը շարունակելու սկզբան : Պ . Ոօջլլու ,
վերաւորուածներուն օգնութեան համար 50,000
ֆրանք տուաւ . և յայտնեց որ վերջին անգամին
փոխ առնելու որոշուած ստակին վասյօք եղած խոր-
հուրդը առաջ տանելու վրայ է նոյն պայմաններով ,
ինչ որ առաջ խօսուած էր : Ի անուածներուն բան և
հայ գըտնելու եղանակը խորհուելու վրայ է ։
Քարձրագոյն դրանը կողմէն Փարիզ նասող գեւսպան
քարձրապատիւ Արևէման փաշացին խըրկած տեղեւ-
կուիններէն կը սորդիմք որ՝ Ի՞ալէ Ոօսյալ և Դույլընի
ըստուած պալատներուն այրիլը տուաւ է : Ժաղովուր-
դը առջի բերանը այս պալատներուն վրայ յարձա-
կեցան . քանի մը կահ կարասիք կոտրուեցին կամ պա-
տու համներէն վար նետեցին , բայց բան կողոպտել
չկայ : Աշքեք հոգի որ գողութիւն կ'ընեին կոր , տես-
նուելնուն պէս նի-ֆէնի բըսնուեցան և սպան-
նուեցան :

Նոր կառավարութեան հրատարակած հիմնա
կան սկզբունքները ասմաք են : 1. Խղճի մտաց և
կրօնից աղատութիւն : 2. Ընկերակցութեան աղա-
տութիւն : 3. Երկիր առնելու համար պատերազմ
ըլլայ : 4. Տիկաներուն պաշտպանութիւն ըլլայ :
5. Ժաղղվուրդը իրարու եղայր սեպութիւն : 6. Ինչ-
չից սեպհականութիւնը յարդի բըռնութի . (այսին-
քըն՝ գողութեամբ կամ յափշտակութեամբ կամ
ինչ և իցե կերպով ուրիշին ինչքին տիրել ըլլայ) :
7. Շարունակ ջանք ըլլայ որ բանուոր մարդոց վար-
քը նիւթագէս շնորհին և աղէկնան . (այսինքն՝
հանգիստ կեանք վարելու բաւական ըլլալու չափ
վաստակ ձեռք ձգելու դործ ունենան, որպէս զե-
կարօտութեան համար ըլլափառութին գողութիւն և
ուրիշ անվայելքաներ ընելու) :

— (Q) սմանեան մեծազօր տէրութեան Փարփշ
նոտող գետպանին բարձրագոյն դուռը խրկած գը-
րութեանը պատմութիւնը մինչեւ վիտքվար 26 Կը-
հասնի. Հետեւեալ աեցելութիւններս առնուած
են Ամբոյու բօրիաֆօլջ բառած լրագրէն :

Փետրվար 27 ին կէս օրէն երկու ժամ ետքը՝ հասարակապետութեան հաստատուելուն հանդէսը եղաւ այն սիւնին տակը՝ որ 1830 ին յուլիսի վերջին օրերը՝ Պուլապօնեան ցեղին վերջին թագաւոր Շառլ Ժ. լ աթոռէ ձգելնուն՝ և անոր տեղը । ուի Ֆիլիբը տէրութեան խնամակալ ընելնուն արձան յիշատակի տնկած էին : Ազգային պահապան զօրքը ամէնն ալ, կամաւոր զօրքերուն խիստ շատը, առժամանակեայ կառավարութեան անդամները, և անթիւ անհամար ժողովուրդ ամէն կողմէն այն հանդէսին եկած էին : Յիշեալ արձանին տակը թագաւորական աթոռը այրեցին, թագաւորութիւնը բոլորին վերցուած ըլլալուն դժախի նշան մը տալու համար :

Նյոյն բօրդաֆօլքօ լրագիրը առժամանակեայ կառավարութեան անդամները այս կերպով կը թուեւ . Պ. Տիւքօն տը լ'յօր՝ առժամանակեայ կառավարութեան նախագահ . Պ. | ամարդին, արտաքին գործոց տեսուչ . Պ. Քոէմինօ, արդարութեան տեսուչ, կամ դատաստանապետ . Պ. | ըստրիւ - Ռոլէն, ներքին գործոց տեսուչ . Պ. Կուտչօ, եկամբարից տեսուչ . Պ. Արակօ, ծովային զօրութեան . Պ. Քառնօ, հասարակաց կրթութեան . կրօնական իրաց տեսչութիւնն ալ որ առաջ մեծ կնքասահին յատկացեալէր, հիմայ այս պաշտօնիս կցորդ ըրբին . Պ. Պէթմօն, առեւտրի տեսուչ . Պ. Մարի, հասարակաց շինուածոց տեսուչ . Քավլսնեաք ճէնէւ . ալլ Ճէզայերի ընդ հանուր կուսակալ . Պ. Կառնիէ բաժէս, Փարիզու քաղաքապետ . և ասոր օդ նական արուեցան Պ. Կինսու և Պ. Ուըքուռ Բնդ հանուր դիւանադպիր անուտնեցաւ Պ. Ֆլոդառ : Փարիզու բօլցիան որ առաջ զատ պաշտօն էր քաղաքապետին իշխանութեանը կցորդ եղաւ : Այս քաքաղաքին ապահովութիւնը պահպանէլը յանձնուեցաւ աղդային պահպան զօրաց, և ասոնց

Ընդհանուր հրամանատար անուանեցաւ Պ. Քուռ-
դալիս գնդապետը :

Տէիւթէներուն և բէր ոը ֆառաններուն խորհրդարանը գոյսուեցաւ, և խորհրդականները քակուեցան. և մէկ մըն ալ պիտի չմիանան : Այսպէտութիւնը, ինչ և իցէ կերպով որ ըլլայ՝ Պուանսայի համար վերցած և խափանուած հրատարակեցաւ . ասկէց ետքը ոչ չէիրիժա՞տ պիտի ըլլայ . որ Պուռակօնեան հին ցեղին կուսակիցներն են . ոչ պօնաբար. դիւր, որ Պօնաբարդէի ցեղէն թագաւոր զնել կ'ուղեն . և ոչ ուրիշ քաղաքական բաժանմունքներ, Առամանակեաց կառավարութիւնը ամեն պէտք եղած միջոցները ՚ի գործ դրած է . որ ոչ հին թագաւորական ցեղերէն մէկը, և ոչ ալնոր ցեղմը թագաւորութեան չհամնի :

Պատէն ծովապէտը թուլքնի նաւախում մբին հրամանաւար անուանեցաւ . և այս նաւախումբը մօտ օրերըս Իդալիսյի կողմերը պիտի երթայ :

Հանուած թագաւոր | ուի Պիլբրին համար
առժամանակեայ կառավարութիւնը վաւերական ե-
ղանակով լրւը առաւ որ իր ընտանեացը հետ մէկ
տեղ Դուքսու քաղաքէն նաւը մտաւ Ինկիլթէռուա-
երթալու համար :

¶ Վ կերջոյ հարկաւոր կը սեպեմբ այս աղ ծանուցանել, որ այս անգամի Յուանսացի խռովութեանը ժամանակիը կրօնական բաներու շատ յարգանք և ակնածութիւն եղաւ . Օտիցցէրիի խոռվարաներուն պէս եկեղեցիներ և վանքեր փլացընելսւ . և կարգաւորներ մեռցընելսւ չելան : Դույլըրի լուած պալատը առած ժամանակին ժողովուրդը պալատին մասաւութին մէջ մէկ խաչելութեան մեծագործ և փառաւոր արձան մը գտաւ . առաջը կայնեցան և յարգական երկրպագութիւն ըրբին . և մէջէրնուն մէկը ըստաւ . բարեկամներ, այս է մեր աէրը : Անկէց առին արձաննը, և մեծ հանդէսով Ոէն Որշ (սուրբ Հոռոս) եկեղեցին տարին : Ճամ

բան երթալնիքէն հանդիպողներուն կ'ըսէին . ժողովուրդ , գլուխնիդ բացէք , խաչելցն քրիստոսի յարդութիւն մատուցէք : Այս բաններուս համար՝ Հառմանու կառավարութեան կողմէն Փարիզ նստող դեսպանը կառավարութեան անդամներուն թուղթ մը գրեց ուրախակցութեան և շնորհակալութեան , որ այս խոտլութիւններուս մէջ կրօնից անարդութիւն բերելով այս գործոյս համբաւը չաղուուեցին : Փարիզու արքեպիսկոպոսն ալ կրնդակի խրկեց եկեղեցիները , որ այս խոտլութեանս ատենը մէռնողներուն հոգւոյն համար ննջեցելոց պաշտօն լլլլլ հանգիսաւոր կերպով . և պաշտօնէն ետքը ողբարձութիւն ժողովուի պատերազմին մէջ վիրաւորուած ներուն օդնութեանը համար :

— | զին անուն Ծնդ զիացի շոգենաւոր անցեալ
կիւրակէ մեր նաւահանգիստը երկաթնեակց սրաւն
| օնտուայէն բերած լուրերը 31 փետրվար | օնտուա
յէն է և 1 մարտ Փարիզէն է : Փարիզ կատարեալ
խաղաղութեան մէջ է . Դաղղիացիկ ուրիշ բանավ
զբաղուած չեն . հասպա միայն իրենց մայրաքաղաքին
խռովութեան . պատճառաւ աւրշողիած չէնքեռը
շնութու : Եժամանակիայ իստավարութիւնն ալ այժ
մեան պարագայներուն համեմատ պատրաստութիւն
ներ կը տեսնայ : | իօն խռովութիւն մը ելաւ
բայց խսկցն առջեւը առնուեցաւ : Եխուավարութիւն
որչափ պատուանուններ կան նէ անոնց ամէնն ալ
վերուցեր է . ասկէ ետեւ թէ նամակներուն հառ
ցէն և թէ ստորագրութիւնը պարզօրէն միայն այ
ինչ անուն . քաղաքացի պիտի դրուի : Պ. Յէնինկը որ
գեսպանութեան պաշտօնավ դարձեալ հոս պիտի
դառնար , | օնտուա քիչ մը ժամանակ ալ կենալը
հարկ եղեր է : Նըմաւրի դուքսը և դքսուհին | օնտուա հաս
սեր են անվանագ . բայց | ուրի Ֆիլիպը և իւր կինը
դեռ երեւանը ըլլալուն , յատկապէս նոգդիացի
կառավարութիւնը՝ կասկածներու երթալուն ծովնն
երեսը շոգենաւեր հաներ է բնալուելու զանանը

Դազգի այսի ծովեղքին երկայնութեանը : Օռլիսնի
դքսուհին ալ Պէոլին հասեր է իւր երկու որդւում
քը որուն մէկն է Փարիզի կոմսը և մէկալը Վարժեթ
դուքսը : Պ. Կիզօն թէ ցամաքը և թէ ծովուն վե-
րայ շատ սոտկալի վտանգներ անցունելէն ետեւ
այն ալ | օնտուա փախեր է :

Մարտ 4 թուականով Մարտիլիայէն կը գրեն որ
Օմալի դուքսը և Ժուանվիլի դուքսը որ Ալեք-
սին շոգենաւով թուալօն եկեր են նոր կառավարու-
թեանը հնադանգելու համար , բայց Դազգիա ոտք

ԻԴԱԼԻԱ : Լիլունցի խոռովութիւնը՝ որ ա

աւելի երեւելին այն է որ՝ լիվունօց ըրածին հաւանութիւն տուող ալ չգըտնուեցաւ անոնց մէջ։ Թօսքանայի ամէն տեղերէն մեծ դուքսին գիրեր կը գրեն իրենց հաւատարմութիւնը վկայելաւ համար։ Ի՞աց | իվունօյի մէջ ելած խոռոշութիւնը տակաւին պէտք եղածին չափ հանդարտած չէ։

ՍՊԱՆԻԱ : Մալսկա կղզին յունվար Տին այս
տեղեկութիւնս առնուած է օրագրոց մէջ, թէ
քանի մը օր կայ, զինուորական ընդհանուր տեղա-
կալը Պ. Վէռառան հնն է, և զինուորական պատ-
րաստութիւններ կ'ըլլայ: Ենանկ կը ցըցընեն որ այս
պատրաստութիւններս Օաֆարինա կղզին տիրե-
լու համար է . բայց բանին պարագայները բարակ
մորով դիտող մարդիկ չեն հաւատար որ ասանկ
պղտիկ տեղի մը համար անանկ մեծ պատրաստու-
թիւն ըլլայ: Օաֆարինա կղզին՝ Մալքրափի կայե-
րութեան երկիրներուն դիմացը կ'իյնայ, և ուղա-
կի ասոր գէմն է Մուլտիս գեեաին բերանը որ ծո-
վը կը թափի. և այս գետոս Մալքրափի երկիրն ու Շե-
ղայիր իրարմէ բաժնելով սահմանագլուխ է: Գե-
տին քովերն ալ Մալքրափի կողմը Վէլիլս բերդը կայ.
որուն մէջ սպանիացի զօրք են սպահանու թիւն
ընողները : Կ'ըսեն որ՝ Օաֆարինայ կղզիներուն
առնութիւն մէկ պատճառակը մըն է . բուն մըսքեր-
նին՝ Վէլիլս բերդին քովի տեղերն ալ առնել է
մինչեւ Շեղայիրի ֆուանսըներուն սահմանագլու-
խը : Մոր ստոյգ կամ սուտ ըլլալը յայտնի չէ . այս
քանո միայն ստոյգ է՝ որ շատ թնդանօդներ և պա-
տերազմի պաշար և շատ զօրք ետեւէ ետեւ Մալք-
րափա հասնելու վրայ են :

ՍԱՐՏԵՆԻԱ: Ե՞ս տեղիս վեհափառ թառ
գաւորը՝ որ իր տէրութեան երկիրներուն մէջ ըստ
գեղեցիկ և խոհական բարեկարգութիւններով ա-
մէն հարատակներուն առ հասարակ սիրելի եղած էր,
հիւանդացաւ: Ե՞ս այժմ (յունվար 10), թէպէտ
երկիւղ մը չի կա կենացը վրայ, բայց գարման տա-
նող քմիջները ըստ են որ ապագային համար շատ
մէծ վատահութիւն չեն կրնար ունենալ:

Հոռոմեն Պառափին գրած են, որ Ոտուսաց կայ-
սեր կայզմէն Հոռոմնաստղը Պ. Պառգլնէ ֆ գեսապանը
սրբազն քահանայապետին խմացուցեր է մէկ ա-
ռանձին խօսակցութեան մը մէջ, որ Ոտուսաստան
գտնուող հոռոմէ տկաններուն համար անցած տարի
օգստոսի մէջ եղած պայմանագրութիւնը կայսրը ըն-
դունեց և հաստատեց : Որբազն քահանայապետը
պատախանեց . այս տեղեկութիւնը քիչ մը առաջ
տրուելու էր ինձի, որ ես ալիմ կարգինալներուն
վերջին անգամի ժողովքին ըրած խօսակցութեանս
մէջ յայտնէի :

Պատմուց ծանուցած եմք որ՝ երբ որ Աստվածաշխատի և Համայնքը և թագավորականացի կառավարութիւնները մաքսի ընկերութիւն ըրբին, Կարօլին թագավորն ալ հրաւիրեցին որ ընկերութեանը մէջ մտնէ: Կարկայ այն տառենը չընդունեց, պատճառելով թէ ընկերութեամբ ապահաններուն մէջ յայտնի գըրուած չէ թէ ասոր նապատակը տէրութեանց եկամուտներուն վկայօք տնտեսութենէն զատ ուրիշ բան չէ. և վաճառականութեան միութիւնն աղինչ ճամբով հաստատուելիքը զբուցուած չէ: Կանց վկայ նոր տեղեկութիւններ ինձի արուի նէ քննել կուտամ ըստաւ, և վերջին սրոշումն ինչ ըլլալը այն ատենը կը յայտնեմ: Հա սմայու կառավարութիւնը պ սատափան տուաւ, նոր տեղեկութիւն չի կայ տուլիք, որովհետեւ ինչ տեղեկութիւն որ մենք ունէինք այս բանիս վկայ՝ ամենքն ալ յայտնեցինք: Եւ խոստացաւ քանի մը մորդու յանձնել, որ ընկերութեան հիմունքը աղջկէ մը քննեն: Կարօլին թագաւորը ասոր մէկ անորոշ պատասխան մը տուաւ, որ այս պատասխանս ալ առաջարկութիւնը չընդունիլ ըստել էր: Կարկայ Կարօլին վերջին խոսվութենէն առաջած է:

— Այս օրերս Կարողայէն ուրիշ շատ զանազան
լուրեր կ'առնուի , բայց բոլըն ալլաւ սոուգուե-
լու . համար Դաղղիայի շոգենաւուն կ'ըսպասուի :
Դմացածներնուա գլխաւորները ասսնիք են :
Պէջիբայի թագաւորութիւնն ալ հասարակա-
սիւտութեան փոխուած է , նոյնավէս ալ Ոարտէնիա-

յի թագաւորութիւնը :
Նաբօլիի թագաւորն ալ տեսնելով որ իրեն դէմ
ապստամբողներուն թիւը օր աւուր կը շատնայ և
խեղջութիւնն ալ իւր երկիրներուն մէջ երթալով
կը սաստիկանայ թողուլ իւր ալժուը ու փախչելը ա-
ռաւել յարմար սեպեր է :

2.2.5. Ա. Ա. Ջ. : Պատրիա (Պատրիականություն)

“ Կառավարութեան խորհրդարանի անդամ ընտրելու համար քաղաքս գտնուած զինուորական խումբերէն զատ՝ նոյն տեղը 50 զինուորով քաղաքածրած խումբ մըն ալ կար Այդուանարէս գնդապետին հրամանին տակը, որ ասկէց քանի մը օր առաջ տէրութենէն հրաման առած էր որ երթայ իր զինուորներով մեծ գունդին հետ միանայ: Այս մեծ գունդիս ալ յանձնուած էր սահմանագլուխներուն պահպանութիւնը: Այս գունդիս զօրավարներուն մէկն էր Անդրէնդիդիս, բնիկ և ամիս քաղաքէն, ու բուն համար ամբատանութիւնն եղած էր, որպէս թէ Քարմաքիս անուն ապատամբին հետ խորհրդակից է: և դատաստանի ներկայանալսւ համար Աթէնք երթալուն հրաման եղած էր: Երթալուէն օր մը առաջ գեկտեմբէր 9. տկր բութիւն մը ունենալ պատճառեց: և իրիկուան դէմ մարդ խընկեց, Ադուանարէս գնդապետը աղաջեց որ քավը գայ: Ադուանարէս բանէ մը կասկած չունենալով Անդրէնդիդիսին քավը գնաց: բայց ոտքը անէն ներս խօժեց չխօժեց՝ Անդրէնդիդիսին մարդիկը վրան թափեցան, և մարդը կապեցին: Նցնհետայն Անդրէնդիդիս հետը շատ մը զինուոր առնելով, որոնք շահէր և իր միտքը հասկըցընելով իրեն խորհրդակից էր առեր, Ադուանարէսին տունը գնաց, և կնոջմէն ուղեց որ գունդին դրօշակը հանէ իրեն տայ: Առնելէն ետքը զինուորական փողը (դռամի բէ գան) զարնել տալով ուրիշ զօրքերն ալ գլուխը ժողվեց: այն տեղի գաւառապետին (նօմնպային) տունը կոխեց որ այն ալ բռնէ: Դաւառ ապետը տառնը չգտաւ: և կարծիք ընելով որ Աւագրիայի հիւպատոսին (քօնսօլին) տունը փախած պիտի ըլլայ, որավիճեան անոր հետ աղէկ կը տեսնուէին, այս հիւպատոսին բնակարանը կոխեց: ամէն տեղը փինարուեց: բայց չկրցաւ գանել: Անկէց դրամանոցը (պանիքն) գնաց: բռնութեամբ բացաւ: և հոն գտեած առակը ամէնն ալ առաւ, որ 20,000 բանկ կը հասնէր, և ընդունելութեան մուրհակ (մաքուղակէնէտի) մը գրեց հոն ձգեց: Կառավարութեան սնուուկին ալ նոյնը ընելու միտք ունէր, բայց տեղւոյն պահապանը արիւութեամբ և հաստատութեամբ դէմ գնելուն հրամար հոն բան մը չկրցաւ ընել: Այս բանի բարուրութեամբ պէտք է թէթեւապէն հետեւակ զօրքերու մէկ խումբ մը շուտ մը վրայ հասաւ: բայց քիչուոր ըլլալուն համար բան մը չի կրցաւ ընել: երկու հոգի ալ վրայ տուաւ, որ ծեծին մէջ զարնուելով մեռան: Այս միջնոցին ապատամբները քաղաքին ամէն փողոցներուն տիրեցին: և սասցէ տեղաց լսեր եմ որ՝ կառավարութեան հակառակ եղաղ կողման մեծերուն գրեթէ ամէնուն հետն ալ Անդրէնդիդիս տեսնուեցաւ, և հետերնին երկար խօսակցութիւն ալ ըրաւ:

“ Ո՞ւս օրը , գեկտեմբեր 10 ին՝ ապստամբները
ապստամբութեան զրօշակը բացին . որ կ'երեւէր
որ շատ ատենէ ’ի վեր պատրաստուած էր : Երկար
ժամանակ էր որ այն քաղաքին մէջ Վալիանոս անուն
մէկը կը բնակէր , որ յունական ուղղափառ ութիւ-
նը սիրելու անուն հանուն էր , և անունի Քարօ-
տիսդրիսիցին կուսակիցներէն էր , ասիկայ շուտ մը
ապստամբներուն հետ միանալով իմացուց որ՝ այս
ապստամբութիւնս զինուորական ձմերոցի մէջ մը-
տածուած և շուտ մը երեւան ելած բան չէ . Վե-
րէնդիդիս իրեն անձնական պաշտպանութեանը կամ
վրէժինդրութեանը համար լրած չէ . այլ երկար ա-
տենէ ’ի վեր շտո զգուշութեամբ մտածուած , և
պէտք եղած բաները կարգի գրուած է . կարելի է
որ՝ գործադրութիւնը պէտք եղածէն քանի մը օր
առաջ սկըսած են , պարագայներէն ստիպուելով :

“Եցն օրը մունետիկները (տէլլալները) քաղաքին փողցները կը պտըտէին հասարակութեան ծանուցանելով թէ, որովհետեւ կառավարութեան սահմանադրական օրէնքը ոտից կոխան կ'ըլլայ կոր, հարկ եղաւ այս օրէնքները պաշտպանելու համար զէնք առնել և ոտք ելլել: Եւ թէ՝ քաղաքացիք բրնաւ վախնալու բան չունին. ամէն մարդ կրնայ հանդարտութեամբ իր բանին գործին պարապիլ: Եւ որովհետեւ քաղաքին ամէն երեւելիները կոմմ պահուած կամ փախած էին, քաղաքացիք իրենցմէ որոշեցին որ հասարակաց ապահովութեան համար խումբ մը պահապան զօրք գնեն. և իրենց այս խորհուրդը ՈՇէրէնդիդիսին խմացլնելով՝ անկեց ալ հատկընալ ուղեցին թէ. իր միտքը Բնէ է: Պատասխան տուաւ թէ իմ կոռուկիլս սահմանադրական օրէնքը պաշտպանելու համար է. և քաղաքապահ զօրք գրուելուն հաջուի տուաւ, այս պայմանավ որ՝ ոչ իրեն և ոչ իր վիճուարներուն ընելիքներուն արգելեք քըլան այս զօրքը: Քաղաքացիք պայմանը ընդունեցին. քաղաքապահ զօրքը սահմանուեցաւ, և անոնց զօրապետ դրուեցաւ Քալսոնցտարդիս, որ Պատրաս գտնուող կառավարութեան հակառակորդներուն գլխաւորն էր: Եցն ատենք ՈՇէրէնդի

ჭახ հասարակութեան պինտ ստորին աստիճանի մարդոցմէն զինուոր գրելու ելաւ . խոստանալով որ՝ զինուոր գրուողին զէնքր ինք տալէն զատ՝ ամիսը 40 դրամի ալռոճիկ կուտայ : Այսակ զինուորներ հետք առնելով քաղաքին բերդը և զինուորներուն ձմերոցը կոխեց . քիչ մը կուուելէն ետքը առաւ . և բերդը որբան բանուարիեալ մարդիկ կային նէ՝ ամէնքն ալ հանեց թող տուաւ : Ծէ՛ որ առաջկուց մոտածել լով բերդին մէջ պատրաստ պաշար գտնուէր, և բերդապահը ապստամբներուն կամակիցի սէս ըլլար նէ՝ բերդը կրնար ասոնց յարձակմանը դիմոնալ : Ըստ մը Աէրէնդիդիս բերդը զէնք և պաշար տանել տուաւ . որպէս զի պէտք եղած առենը կարող ըլլայ հոն ապաւինիլ, և վրան ելլողներուն դէմ կենալ :

“ Այս ապստամբութիւնս եղած առաջին օրը համբաւ մըն ալ ելաւ, որպէս թէ ամէն տեղ խօսքը մէկ ըրտծ են, հիմոկուան գտնուած և հաստատուած կառավարութեան կերպը փոխելու համար ամէնը մէկէն ոտք պիտի ելլեն : Կառավարութեան հակառակորդները որ քաղաքին մէջ կը գըտնուէին, անանկ ցըտուցին, որպէս թէ իրենք ալ այս ապստամբութեանը կամակից են : Լզածներուն և ըլլակիներուն նայելով գժուար կը հաւատացուի ըսելը թէ հակառակորդները այս ապստամբութեանս մէջ բնուած մատ ըունին . քանզի մը հոգիէ քաղլացած խումբ մը չկրնար այսպիսի բաներ ընել անանկ մէկ քաղաքի մը մէջ, որ զէնք գործածելու բաւականութիւն ունեցող հազար հոգիէն աւելի կ'ելլէ . և քաղաքապետ և իշխան ըլլայ ալ նէ քաղաքին մէջ՝ ասոնք բաւական են ապստամբները զապելու : Աէրէնդիդիս և ընկերները յափշտակութեան ամենեւին ձեռք չզարկին . շատոնցվընէ մոտածուած և որոշուածի պէս եղանակ մը բըռնեցին . անանկ որ՝ տեսնողը կը կարծէր թէ ասոնք չէ թէ ապստամբ, այլ կառավարութեան կողմէն քաղաքը պահպանելու համար դըրուած օրինաւոր զօրքն են : Հակառակորդները բացէն կառավարութեան հակառակէլու չէին համարձակեր, միաբը յայտնելու համար կ'ըսպասէին որ կառավարութեան գէմ ուրիշ մէկ շփուժ մը ելլէ : Բայց երբ լսեցին որ Յաւնաստանի ուրիշ ամէն տեղերը կատարեալ հանգարութիւն կը տիրէ, սըրտերնին վախ մօտաւ . և Աէրէնդիդիս իրեն 50 հոգիով մինակ մնաց, այն ամէնը՝ որ ինչպէս կ'երեւէր, զինքը դրդեր և յորդորեր էին այս ապստամբութիւնը հանելու, և սգնականութիւն խոստացեր էին, անմեղուկ մը ետ քաշուեցան . մարդը մինակ ձըգեցին :

“ Այս ատենքը այս քաղաքս , որ յունաց թագաւորութեան ամէն երկիրներէն աւելի վաճառականանութեամբ ծաղկած էր , քանի մը մարդոց ձեռքը մնաց , որ իրենց սուրբէն զատ օրէնք չէին ճանշնարք : Տէրութեան հաւասարիմ մնացած զինուորներուն ամէնուն ալ ձեռքէն ասոնք զէնքերը առին և քաղաքէն դուրս վրունաեցին , թէ որ նորբէն քաղաքը մըտնէք նէ ձեզ կ'ըսպաննենք ըսելով : Իշխանութեան տէր եղողները ամէնն ալ Պատրասէն դուրս

բեր 13. այն օրը ինկիվիզի հիւպատոսն ու Աէրէնդիթիս առանձին խօսակցութիւն ըրին : Այս խօսակցութեանս մէջ հիւպատոսը խօստացաւ Աէրէնդիթիսին 10,000 լար տալրւ . բայց այն սպամանով որ այն ալ իր մարդիկը հետք առնէ , ինկիվիզի նառ մը մըսնէ և Քաղաքոս երթայ : Աէրէնդիթիս համեցաւնէ՝ շուտ մը հիւպատոսը քաղաքացուց իմացուց , որ մէջերնին այն ստակը ժողվեն ու տան : Բայց որովհետեւ ասանկ պարագայներու մէջ այնքան ստակ գտնել և վճարելը մէկ օրվան մէջ լըմբննալու դիւրին բան չէ , հիւպատոսը Քաղամովարդիսը հետք առաւ գլխաւոր հարկապահանջին գնաց . և ընդունելութեան մուրհակ մը անոր տալրվ 5,000 լար անկէց առաւ . մնացածը քաղաքին մէջ եղած ինկիվիզի դրամանոցը (պանքան) վճարեց : Աէրէնդիթիս որ Աէրէնդիթիսի ինքն ալ սկսած գործը յաջողութեամբ գլուխ հանելու յոյս չունէր . որովհետեւ այսքան քիչ ստակը բաւական սեպեց , որ իրեն առաջկու ուղածին տասնէն մէկն էր խելքը կորեց որ շատ չանցնիր , թագաւորական զօրքը կուգան . և հիմայ չերթայ նէ՝ ետքը երթալը կը դժարնայ : Ասով դիւրաւ կը հասկրցուի ըրած առատածեռնութեանը պատճառը , թէ ինչպէս բորը քաղաքէն միայն 40,000 լար առնելը հերիք սեպեց : Բայց թէ որ ինկիվիզի մէջ չմըսնէր նէ՝ շատ չէր անցներ , ըրածներուն արժանաւոր սպատիժըն ալ կը գտնէր : Աէրէնդիթիս նաւը մըսնելէն քանի մը ժամառաջ գաւառապետը քաղաքը մտաւ հետք խելմը կրթեալ և բարեկարգեալ զօրք բերելով , որ արտօրնօք զընակայ տեղերէն ժողվիր էր . և ուղղակի ապստամբներուն վրայ գնաց : Ասոնք քաղաքին ամէն փողոցներէն հալածուելով և վարդուելով , որովհետեւ քաղաքացիներն ալ հրապէնքնին առին ասոնց վրայ ելել սկսան , հարկադրեցան արտօրնօք դէտ ՚ի նաւահանգիստը փախչելու . հնե քիչ մը ատեն իրենց վրայ յարձակուողներուն դէմ դիմացան . մինչեւ որ ինկիվիզի նաւուն առնապաւը եկաւ ասոնք նաւը կրել սկսաւ : Ասոնց նաւը մըսնելը դիւրացընելու համար նաւապետը դրօշակը առաւ ցամաքը ելաւ . ինկիվիզի հիւպատոսին տունն քանի մը զինուոր ալ հետք առաւ եկաւ նաւահանգիստին պատուարին վրայ կեցաւ . և թագաւորական զօրսցը ասոնց վրայ կրակ ընելը դադարեցընել տուաւ . ապստամբները այն ատենը կարող եղան հանգիստ և ապահով իրենց ունեցածներով սանապաւը մտնել և նաւը երթալ , ինկիվիզի դրօշակին պաշտպանութեամբը : Հետերնին 15 հատ վիրաւոր տարին . որոնցմէ երկուքը յաջորդ օրը մէռաննաւը կտեմբերէր 15 ին սպատառատեցաւ Քուֆուերթալրւ , որ ապստամբները հոն հանէ . բայց ետքը իմացանք որ հոն երթալու հրաման չէ առեր . Անլթա տարերէ է : Ասոր վրայ քաղաքը խաղաղեցաւ . քանի մը մարդ բըռնեցին և քննութիւններ ընել սկսան . բայց կ'երեւի որ այս քննութիւննէ բան պիտի չհասկրցուի . որովհետեւ ապստամբներուն ոչ գլուխը հոն է հիմայ , և նէ գործակիցները . մը նացածներն ալ բնաւ մէկ բանէ մը առզեկութիւն չունիմք ըսելով դիւրաւ կրնան ազատիւլ :

ΕΩΦ ΕΘΗ

Պրուսայէն մէզի սա նամակը կը գրեն :

“ Յարդապատիւ մեծարու Հրատարակէք
Հայաստան պատուական օրագրին :

“Օմիւռնացի Անծավատիւ Առաքել Աավա-
լանեան ազգասէր արգոյ աղայն՝ աւեւարական գոր-
ծոց պատճառաւ քաղաքո գալով փետրվար 15 ին
կիրակի օրը առաւօտեան ժամերգութենէն զինի
բարեհաձեցաւ քաղաքիս դպրատանը այցելութիւն
ընել, ուր որ բոլոր աշակերտները ամէն կիրակի
պատրաստ գտնուելով, օգոստափառ Առւլթան
Վալու իւլ Անձիտ խան ինքնակալ Ամբային կենացը,
և Արքազան Կաթուղիկոսին. և վեհափառ Պատ-
րիարք Հօր, և բոլոր ազգախնամ Ամիրայից կենա-
ցը երիարութեան համար, և մանաւանդ դպրա-
տանս ընկերութեան գրեալ Ազգասէր անձանց հա-
մար բարեմաղթութիւններ ըլլալով, յատկապէս
հանդիփառոր պաշոօն մը կ'ըլլայ ննջեցելոց հոգւցն
համար, սրուն որ ներկայ կը գտնուին քաղաքիս
բազմաթիւ անձինքը, և անիէ ետքը՝ ինչպէս որ ու-
վորութիւն է՝ պղոտի քննութիւնն մը կ'ըլլայ ուսում-
նական աշակերտաց համար, որնցմէ մէկ քանի հո-
գի ելլելով քառորդ ժամի չափ իրարու հետ հաց
պատրաստիանի ընելցն ետքը՝ կ'արձըկիլին :

“**Հ**ա այս ամէնը՝ նոյն ազգասէր անձը տեսնելով և մէծապէս ուրախանակութ՝ դպրատանս Արքացան Պօղս Առաքելց անուամբ կանչքված ընկերութեանը երկու հաշոք զուռուշը ընծայ շնորհելքարեհամձնեցաւ, ուստի կը խնդրեմք ձեր ազնուական

՚նու ՚Ե՞ն, որ այս գերայարդ անձին ըրած գովելի ազգա-
սիրութիւն ձեր պատուական լրագրին միջոցաւը հրա-
տարակելը, որով մեզ զի մէջ չնորհ.ք մը ըրած կ'ըլլաք»:
|| ՚Նամք ակնդէտ կատարման խնդրս մերում:

1848 ፲፭፻፱ ፲፭፻፱
፲፭፻፱

Ասլամանեան յարդի կոտքել աղային ուսումնական եռամբը յիրաւի շատ գովելի է, և իւր ազգա-
սէր փափաքը կը ցըցընէ, որ գպրատան յառաջադի-
մաւթիւնը տեսնելով՝ տառնեկ առատաձեռնու-
թեամբ մը քաջալերութիւն տուաւ պրուսացւոց,
որ այն եղանակը շարունակեն : Անք ալ առաւե-
լապէս գոհ եմք, երբ կը տեսնեմք և կը լսեմք այս
պէս ուսումնասիրութիւն մը, որ օրէ օր տեղ տեղ
կը ծաղիի և կ'ելելնայ ազգիս մէջ մանաւանդ ինձի
մեծ ուրախութիւն է, որ սյասիսի պատուական և
մսիթարիչ ըստրեր այն գեղեցիկ քաղաքին վրայ կը
լսեմ, ուր որ իմ առաջին տարիքս անցուցի, և դրա-
բառանել մէջ ստացայ առաջին գրաւոր վարժութիս :

Առաջ ալ դէպքը պատահեր է նէ ըստ եմք .
այս քաղաքիս գպրատունը հին է . և ատեն տատեն
ուսումնական աշակերտներ ալ հասցուցած է : Հի-
մակրուան գպրացներուն մէջ բանուած նոր կերպին
ալ հետեւողներուն առաջինն է . և ուրիշ գպրա-
տուններուն ալ օրինակ կրնաց ըլլալ . մանաւանդ այն
բանով որ մեծարդի հոգաբարձուները իրենց նա-
մակին մէջ կը գրեն , թէ կիրակի օրերը աղայք եկե-
զեցիէն արձակուելէն ետքը գպրատուն կուգան ,
և մասնաւոր ազօթքներ ընելավ մեծաղօր Խքնակա-
լին և Արքազան Կաթուղիկոսին և վեհափառ Պատ-
րիարք Հօր և գերապատիւ ազգախնամ Վմիրայից
և գպրատանը վրայ յատուկ ինամբ ցըցընող աղնուա-
կանաց կենաց երկարութեան և երջանկութեանը
համար՝ իրենց երախտագիտութեան պարագը վճա-
րելէն ետքը , շաբաթական ուսմունքնին ալ տեսնել
ու զողներուն կը ցըցընեն , այն շաբթուան առած
գամերնուն վրայ քառորդ ժամնու չափ հարց պա-
տասխանի ընելավ : Վատլ թէ վարժապետները թէ
աշտկերտները բան առաջ տանելու որպէս թէ կը
բընադատուին . քանզի ամէն շաբթու գանուող
հանդիսականներուն՝ որ անցեալ շաբթուան եղած
հարց պատասխանիները տակաւին մըսքերնուն ե-
լած չէ , նոր բան երեւան հանելու կը հարկադրին .
մասնաւանդ որ՝ հոգաբարձուներուն մէջ գիտնական
մարդիկ ալ կան . կը հանչնան թէ մէկ շաբթուան
մէջ ի՞նչ սորվեր են :

Ճաղավառդը ամէն կիրակի առւտու ժամերգութենէն ետքը կէս ժամու չափ գպրատուն երթալու ժամանակ ունենայ նէ՝ ամէն տեղ այս տեսակ շարաթական քննութիւնը տղոյ շատ օգտակար է : Այս տիտան անդամը քննութիւնը ըլլալը (որ երբէմ աւելի երկար ալ կը քըշէ), այս գլխաւոր անտեղութիւնս ունի որ՝ տղոյ վեց ամսուանն մէջ սորված բանը չորս հինգ ժամու մէջ քննութեան անցնելով՝ մարդ չի կրնար լիովին և ճիշդ տեղեկանալթէ այնքան ժամանակի մէջ տղան ինչ սորված է . ամէն մէկ տղու քննութեանը համար՝ թէ որ քանի մը կերպ ուսմունք կայ նէ , ամէն մէկ ուսման հինգրոպէ հաղիւ կը մնայ . հիմայ գիւրին հաշիւ մը կը ունայ ընել ամէն մարդ՝ թէ վեց ամսուան սորվածէն Բնէ կը հասկընանք հինգ րոպէի մէջ : Վախկայ քըննութիւնները անօդուտ են ըսելչէ . միջոցը երկար քշէն բան մը չհասկըցուիր ըսելէ . պրուսացւոց բըռնած ձամբովը ամէն կիրակի քննութիւն ըլլալը շատ աղէկ է . և այս բանիս վրայ է որ կը փափաքիմք թէ պրուսացիք ուրիշ տեղերուն ալ օրինակ ըլլան :

Քիչ մը ժամանակի փոփոխութեամբ՝ ուրիշ մեծ օդուած մըն ալ կ'ըլլայ ասկէց : Եւրոպայի մէջ տեղ տեղ, մանաւանդ Փռանսա, կիրակիի դպրատուններ կան, որ ֆռանսըզի լեզուով ենու ու պիճանը կ'ըսուին : Ըստ մարդիկ կան որ շաբթու մէջ քանի գործի վրայ են, չեն կրնար իրենց մոքին մըշակութեանը պարապիլ. կիրակի օրերը եկեղեցւոյ մէջ արուած քարոզէն ալ մեծ օդուած մը չեն կրնար քաղել. որովհետեւ քարոզը յատուի իրենց համար տրուածի պէս ըբռնելով անհոգութեամբ մտիկ կ'ընեն . և անկէց ալ ձանձրութիւն կուգայ : Ճամբրգութենէն ետքը հաց ուտելու և ուրիշ կարեւոր բաները հոգալու չափ ժամանակ չնորհելով՝ երեք կամ չորս ժամու չափ ետքը դպրատունը բացուի, տղայքը ժողվուին . հարց պատասխանւոյ քիչ մը ընդարձակ ժամանակ կ'ունենան . և հանդիսականները սիրով մտիկ կ'ընեն . և իրենց դիւրակ հասկընալու ուսմունքներէն բան ալ կը սորիլին . ոմանք աշխարհագրութեան վերաբերեալ տեղեկութիւններ կ'ըստանան . ոմանք թուաբանական խընդիրներ լուծելու միտ կը դնեն : Եւ թէ որ քրիստոնէական վարդապետութեան դասաստութեան ալ կայ այն դպրատանը մէջնէ, (որ կը յուսամբ թէ ամէն դպրատուններու մէջ կայ), մանր մատաղահասակ տղայքը հաւատալի ճշմարտութեանց վրայ

Հարց պատասխանի ընելով՝ մեծերն ալ մտադրութեամբ մտիկ կ'ընեն, և այս ամենահարկաւոր ուռունունքէս իրենց չփառցած բաներն ալ կը սորվին, գիտցածներնուն վրայ ալ աւելի կը հաստատուին։ Եւ ասով մեծ օգուտ մըն ալ այն կ'ըլլայ ըստ հոգւց և ըստ մարմնոյ, որ կիրակի օրերը սուրբ կը մընան, ինչպէս որ աստուածային պատուէրն է։ և բանի գործի չեղող մարդիկ զբօսանաց և ժամանակ անցընելու համար անօգուտ և թէ իրենց հոգւցն թէ ընչցը և թէ առողջուելը վնասակար միջոցներու չեն զիմեր։ Ած ալ այնպի պատուական զբօսանաց առիթ եղաղդպրատունը կ'օրհնէ. և օրէ օր նախանձելի և ազգին պարծանք ըլլալու պտուղներ կը հասնին։

Հասարակութիւնը մէկ անդամը կիրակի օրերուն վրայ ասոր համը առնելու ըլլայ նէ շաբաթը մէկ օրը քիչ կուգոյ. ամէն օր կամ գոնէ շաբաթը երեք օր իրիկուըները բան սորվելու համար տեղ մը ժողվուելու, և հնա իրենց բան սորվեցընող մէկ կը ճարելու ալ ճամբայ կը բացուի. և ասով գիշերուան դպրատուններ ալ կրնան հաստատիլ, ինչպէս օր Խորիսայի մէջ հաստատուածներուն համար աղէկ տեղեկութիւն տուած է ներկայ տարւոյ մէտաք առ ամբող մն բարեմանալու։

վետրուար ամսուան բազմավայրք է :
Ո՞ւր բարեպաշտ ազգէն շատերը՝ կիրակի օրեր
այսպէս մէկ անմեղ և դուարձալի զբօսանք մը կը
փրնուըռ են . և ասոնց այսպիսի փափսքը օտարուու-
գիներուն ալ ծանօթ եղած ըլլալով՝ ազգին ոյս բա-
րի բնաւորութիւնը ազգին մէջ՝ որում ցանելու մի-
ջոց բըռնած են : Ճամանակ մը որքան մարդիկ կը
տեսնէինք , որ կիրակի եղածին պէս հոգեւոր ըն-
թերցմունքներ կարգալու և մտիկ ընելու համար
մարմնայ աշխատութեան ալ յանձնառու ըլլալով
հեռաւոր տեղեր կ'երթային . և պարզմութեամբ
հոգեկորաց որոգայթի մէջ կ'ինային . որոնցմէ շա-
տերը գտաստացան . և մնացածներուն համար ալ
առ Ած աղօժմելու պարտական եմք որ զգաստութե-
հոգի շնորհէ անոնց : Այս ամէն բաներըս մտածելով ,
կիրակի օրերը վերը ըսածիս պէս կիրակիէ կիրսկի
քննութիւն ընելը շատ մեծ օգուաներ ունի :

Կըրնայ ըստեիլ որ վարժապետները մինչեւ շաբ-
թու գլուխ աղջոց հետ աշխատելէն ետքը մէկ կի-
րակի օրերն ալ մի չանգչին : Բայց թէ որ մէկ ան-
գամմը այս կերպ քննութիւնը կարգի գրուի նէ՝
վարժապետներն ալ հանգչելու ժամանակ կրնան ու-
նենալ . և ասոր տնօրէնութիւնը՝ ամէն մէկ դպրու-
տան հոգաբարձուներն ու վարժապետները իրարու-
հետ խորհելավ կրնան գտնել . ամէն մէկ դպրուտան
մասնաւոր պարագայները չեն ներեր որ ամէնուն
ընդհանուր մէկ կանոն մը դրուի :

— Անցածները արշալսա արտադրեան լրագիրը նամակ մը հրատարակեր էր հայաստան լրագիրը մեղադրելով, որպէս թէ Համագոյն Շնկերութեն նոր հիմնարկած խորհրդարանը և գպրատունը չենակեր։ Հայաստանը անոր պատասխանը տուաւ 33-86 թւ-
ւոյն մէջ։ Ընկեց եաքն ալ այն նամակը արշալսա ամին խրկող բարեւէր և յիրաւի Ծգդասէր անձը հայաստանի հրատարակման սենեակը գալով՝ հրատարակիշներուն հետ տեսնուեցաւ, գիրը գրով ինքն ըլլալը յայտնուեցաւ, որովհետեւ հրատարակիշները ըսին իրեն որ մասնաւոր նամակի մը ովլ ըլլալը իմացած են և անոնց ցուցրցած պատճառներուն համոզուելով և ասկէ ետեւ անոնկ լուրերը հայաստանին մէջ ժամանակին հրատարակուելուն ինչ միջոց կրնայ ըլլալը իմանալով ելաւ գնաց : Ուստի 306 թւուցն մէջ հրատարակուած նամակին պատսախան տալ հարկ չեղաւ այսօր :

— Այսամթիպու ոռւրբ Աահակեան բարեհամ
բաւ դպրոցին բարեկամձեւանալով դարձեալ նոյն
արլըլցանի մէջ միւս նամակը գրող ազգասէրն ալ ան-
պատասխան չձգելու Համար, այսշափ միայն կ'ըսեմք
որ բարեկենդանի շարժուն՝ ուրբաթ օրը եղած
քննութիւնը մասնաւոր քննութիւն էր ինչպէս ին-
քնի ալ կը վկայէ իւր նամակին մէջ ճանաւոր ըսելով։
Ուրեմն մէք նոյն դպրոցի տեսուուչ և մեր ազնիւ բա-
րեկամ յարգապատիւ Ենդրանիկ աղային խօսքին և
գրցն համեմուր կ'ըսպասէինք այն մասնաւոր քնն-
ութենէն ետեւ ընդհանուր քննութիւնը երբ ըւ-
լալը . որպէս զի մէծ ուրախութեամբ սրտի հրա-
տարակէինք անոր առաստ արդիւնքը . ինչպէս որ
մինչեւ հիմայ բնաւ ղանց առած չունինք նոյն դըպ-
րոցին յառաջադիմութեան և ոչ մէկ լուրբ : Բայց
ոռւրբ Աահակեան ընկերութիւն այս տարի այն մասնա-
ւոր քննութիւնը միանդամայն ընդհանուրի տեղալ
։ Տարեկան շնորհական առ ապահանգամ մէջ առ շնոր-

Ուհակեան ընկերութել որ ազգին իմացուց կանուխ կէկ , Տոռապան անուն բանասիրական օրագրի մը մօտերս յիշել դպրոցի աշակերտաց աշխատասիրութել հրատարակութիլը , որուն երեք ամիս առաջ միայն չոր խօսքը անցնելով , նոյն միջջցին իր ձայննալդադրեցաւ =

— Փետրվար 29 կիրակի օրը Դայլաթիա հռոմէական Հայոց Յիսուս Փրկիչ մայր եկեղեցիին մէջ աղքային ընդհանուր ժողովք մը եղաւ : Այս ժողովքին առաջարկուեցաւ որ հռոմէական հայք ալ ուրիշ աղքաց՝ (Օսմանեան տէրութենէն ընդհուած հրովարտակին համեմատ երկու ժողովք ունենան մէկը եկեղեցականաց և մէկն ալ աշխարհականաց , որպէս զի աղքային հոգեւոր ու մարմնաւոր գործերը առաւել դիւրութեամք և բարեկարգութեամք տեսնութին : Ճողովքը այս առաջարկութեամք անը վրայ քիչ մը ատեն խորհելէն և խօսելէն ետեւ ուրիշ մէկ օրուան աղքային ժողովին մը ձգեց դարձեալ անոր վրայով երկարօրէն խորհելու ու խօսելու :

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ

ՀՐԱՏԱՐԱԿԻ 24 ԼՐԱԳՐԻՍ

3-4. Mr. Skr. կրտ. Զայնը:

ԱՐԵՎԵԼԵՎՈՅ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՐ ԲԱՆ :

ԿՈՍՏԱԴԻՎՈՒԹՅՈՒՆ

Տ ՏԵՐԱՆԻ ՑՈՎՆԱՆՆՈՒ ՄՏԾԵՆՏՈՒԵԱՆ